ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ*

«ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲՆԱԿԱՑ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՆՈՐԱԳՅՈՒՏ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ

Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն մինչև այժմ դավանաբանական գրականությամբ զբաղվող բանասերներին հայտնի էր միայն եզակի հրատարակությամբ, որը, ինչպես մեր ուսումնասիրությունից պարզվեց, պակասավոր է և չի ուսումնասիրված: Այն մի ժողովածու է, որի մեջ կարելի է գտնել 13—14-րդ դարերում, դրանից առաջ կամ հետո, Հայ Եկեղեցու ծոցում ծնունդ առած դավանաբանական բազմաթիվ վեճերի և հատկապես քաղկեդոնական երկաբնակների քրիստոսաբանական վիճելի հարցերի ու խնդիրների վերաբերյալ՝ արևելյան միաբնակների ուղղափառ վարդապետության վրա հիմնված և նրանից բխող ճշգրիտ պատասխանները:

Օրբելյանը, հավատարիմ մնալով Հայ Եկեղեցու ուղղափառ վարդապետության դարավոր ավանդներին, պատասխան է տալիս երկաբնակների բազմաթիվ հարձակումներին:

Սույն գործը իր խորքի մեջ արդեն իսկ մի հակաճառություն է երկաբնակ բազմաթիվ դավանաբանական ու ծիսական ըմբռնումների դեմ: Սակայն այն, հակաճառություն լինելուց բացի, միաժամանակ ջատագովություն է հայ ուղղափառ վարդապետության: Այսպես, ժողովածուն բաղկացած լինելով տասներկու մեծ ու փոքր գլուխներից կամ «ձեռնարկներից», նրանց մեջ հեղինակը, հավատարիմ մնալով Ավետարանի ոգուն, միաժամանակ ավետարանական դասեր է տալիս Հայ Եկեղեցու զավակներին, որպեսզի նրանք ուշադիր և հաստատ մնան իրենց հավատքի մեջ և չընկնեն օտար ազդեցությունների տակ:

Օրբելյանը, «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն ձեռնարկելուց առաջ, իր գործի նպատակն ու դրդապատճառը արտահայտելու համար, գրել է մի առաջաբան, որի մեջ, ամենից առաջ իր խոսքը ուղղելով ժամանակի հեղինակություն վայելող անձանց, որոնք մոլորության էին մատնվել, ասում է. «Լուարուք ինձ գլուխք վեհագոյնք... ահա տեսանեմ զձեզ յափն մոլորութեան, հետևեալ ձայնին կորընտական և մակաղեալ յարօտս տարապարտս»[1]: Այնուհետև հայտնելով իր սրտի ցավը՝ Օրբելյանը գրում է, որ մոլորեցնողները մեր անքիծ հավատքը կամենում են «տապալել և քակել ի հաստատուն և յանժարժ վիմէն յառաքելական դաւանութեանցը, զոր ընկալաւ ազգս Հայոց ի սրբոյ Լուսաւորչէն Գրիգորէ և շինել ի վերայ աւազահիմն վիմին, որ ի չար առաջնորդեաց անիծեալ ժողովոյն Քաղկեդոնի կառուցաւ»[2]:

Հեղինակը առաջաբանը ավարտում է ընթերցողներին զգաստացնելով, հորդորում է, որպեսզի նրանք աչալուրջ լինեն, հաստատ մնան իրենց հավատքի մեջ և ճանաչեն «զմահահոտ գարշութիւն օտար վարդապետութեան նոցա... որոնք շարժեալ ի չար հոգւոյն ապականեցին զմեծ մասն Հայոց»[3]:

Օրբելյանը լավ է իմանում Ավետարանը և Եկեղեցու ուղղափառ հայրերի գրավոր և

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1980 թվականի № Թ-ից:

[1] Ստեփանոս արքեպ. Օրբելյան, Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, Կ. Պոլիս 1756, էջ 4:

[2] Նույնը, էջ 5:

[3] Նույնը, էջ 7:

բանավոր ավանդները, որովհետև գրեթե բոլոր գլուխների մեջ, իր խոսքը հաստատելու համար, մեջբերումներ է կատարում Ավետարանից և Եկեղեցու հայրերի ստեղծագործություններից:

Նա զգուշանում է իր գործը շարադրելիս: Լեզուն այնքան պարզ է, մտքերը՝ հստակ ու մատչելի, որ նա հասկանալի կերպով մտածածը հանձնում է թղթին՝ վստահ լինելով, որ հասկանալի պիտի լինի բոլոր խավերի մարդկանց: Նշում ենք, **բոլոր խավերի**, որովհետև, ինչպես ինքն արդեն հիշում է, աղանդավորական շարժումը իր ճյուղերով թափանցել էր ամենուր և կարող էր վտանգ սպառնալ Հայ Եկեղեցու ներքին միասնությանը:

Օրբելյանի այս երկասիրությունը մի տեսակ ժամանակի տուրքն էր, և ինքն էլ, որպես մեծ հեղինակություն և Սյունյաց միտրոպոլիտ, բնականաբար լավ հասկանալով ժամանակաշրջանի տիրող ընդվզումները, մտածեց ստեղծել մի գործ՝ պաշտպանելու համար իր հավատացյալ հոտը:

Օրբելյանի վերոհիշյալ ժողովածուն ոչ միայն իր ժամանակի, այլև հետագա դարերի համար եղել է զենք՝ պայքարելու աղանդավորական շարժումների և հատկապես երկաբնակ ընդվզումների դեմ:

Մեր աշխատասիրության մեջ մենք պետք չէ կանգ առնենք ժողովածուի յուրաքանչյուր գլխի բովանդակության և արժեքի վրա, որովհետև այն ավելի լայն ուսումնասիրություն է պահանջում: Մեր նպատակն է միայն հիմնական գծերի մեջ ներկայացնել երեք նորագյուտ հատվածները և ցույց տալ նրանց արժեքը:

Նորագյուտ հատվածներից առաջինը, որ է՝ «Ընդդէմ այնոցիկ, որք երկու ասեն բնութիւն», արդեն մեզ հստակ կերպով հուշում է, որ այն ուղղված է քաղկեդոնական երկաբնակների դեմ:

Օրբելյանի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուի հատվածներից մեկը հենց «Ընդդէմ այնոցիկ, որք երկու ասեն բնութիւն» նորագյուտ հատվածն է: Այն ուղղված է քաղկեդոնական երկաբնակների դեմ, որոնք «ի վերայ միոյ Քրիստոսի երկու իմանան բնութիւն»:

Օրբելյանը, բացահայտելով երկաբնակների թյուր ըմբռնումները, եզրակացության մեջ, որպես անհրաժեշտություն, նշում է. «Արդ, ո՞ր միտք կարէ իմանալ զայս, եթէ ոչ հաւատովք ընդունիցիմք»:

Նորագյուտ հատվածներից երկրորդը կոչվում է «Ընդդէմ այնոցիկ, որք զմարմինն Քրիստոսի ապականացու ասեն»: Այս գլուխը ուղղված է նրանց դեմ, որոնք ընդունում էին, թե Քրիստոսի մարմինը ենթակա է ապականման: Այս գլխում ցայտուն կերպով հանդես է գալիս Օրբելյանի աստվածաբանական փայլուն միտքը, որը, հիմնվելով Ավետարանի ավանդության վրա, պաշտպանում է իր տեսակետը և հայտնում մեր Եկեղեցու ուղղափառ դիրքը, որ մենք Քրիստոսի մարմինը ընդունում ենք անապական, որը ենթակա չէ մեղքի: Այստեղ վեճը գնում է հիմնականում պատարագի խմորով հացի և ջրախառն գինու շուրջ: Օրբելյանը պաշտպանում է այն տեսակետը, որ պատարագի հացը պետք է լինի բաղարջ, որովհետև խմորը խորհրդանիշ է ապականության և կեղծավորության: Նա իր ասելիքը հաստատելու համար մեջ է բերում ավետարանական այն պատումը, որ Տերը պատարագի խորհուրդը հաստատելու ժամանակ օգտագործեց բաղարջ հաց և այն բարձրացնելով վեր, օրհնեց և ասաց. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է մարմինն իմ»[4]: Իսկ ինչ վերաբերվում է ջրախառն բաժակին, նա հաստատում է, որ այդ ևս անհարազատ է Ավետարանի ոգուն, որովհետև Տերը խորհուրդը հաստատելիս միայն պարզ գինի օգտագործեց, այն բարձրացնելով օրհնեց և ասաց. «Արբէ՛ք ի սմանէ, այս է արիւնն իմ»[5]: Գինու մեջ ջուր խառնելու համար երկաբնակները հիմք են ընդունում այն, որ երբ հռոմեացի զինվորը խաչի վրա Քրիստոսի կողը գեղարդով խոցեց, այն ժամանակ Տիրոջ կողից արյան հետ միաժամանակ ջուր բխեց:

Օրբելյանը այս իրողությունը ևս բացահայտում է ասելով, որ այդ ջուրը մաքրման համար ավանդվեց մեզ, և ովքեր ուզում են հաղորդվել սուրբ արյամբ, նախ պետք է մաքրվեն ջրով: Ջուրը մկրտության համար է տրված: Այս փաստը հիմնավորելու համար նա Եփրեմի մեկնություն Ավետարանի գրքից մեջ է բերում հետևյալ համապատասխան հատվածը. «Նախ ջուր բղխեաց և ապա արիւն, յայտ ցուցանելով, եթէ որք կամին հաղորդել արեանն Տեառն, նաև ջրով լուսացին և մաքրեալք արժանասցին կենաց հացին հաղորդել»:

Օրբելյանը, դեմ դուրս գալով Քրիստոսի մարմինը ապականացու ասողներին, կատարում է հետևյալ հաստատումը և ասում. «Թէ ապականացու է, զիա՞րդ յերկնից իջեալ, և զիա՞րդ զկերողսն անմահացուցէ և կամ զիա՞րդ ասէք զՄարիամ Աստուածածին, և թէ նա ապականացու մարմին ծնաւ, զիա՞րդ կուսութիւնն ամբողջ մնաց»:

Նորագյուտ հատվածներից վերջինը կոչվում է «Պատճառ տօնի Սրբոյ Հոգւոյն, ե-

[4] Ավետարան ըստ Մատթեոսի, ԻԶ 26:
[5] Նույնը, ԻԶ 27:

թէ ընդէր մի օր տօնեմք և ոչ ութ, ըստ այլ ազգաց քրիստոնէից: Եւ յինչ դէմս հայի միոյ աւուր խորհուրդն: Եւ այս ի խնդրոյ տեառն Յովհաննիսի Բջնոյ եպիսկոպոսի»:

Այս մասին Օրբելյանը ասում է դարձյալ. «Ծանիր ճշմարտիւ, զի ամենայն ոք, որ զմի օրն ութ սահմանէ, ապականէ զմիակին խորհուրդն և զայրացուցանէ զՀոգին Սուրբ»... «Մի՞թէ Հոգին սուրբ ոչ էր կարող մինչև յութ օրն հողմով և հրեղէն լեզուօք երևել ի վերնատանն, ով վատթար, դո՛ւ իմաստագո՞յն ես քան զՀոգին Սուրբ»:

Ստորև աղյուսակի կարգով ներկայացվում է նորագյուտ երեք հատվածների բովանդակությունը Երևանի Մատենադարանի ձեռագրերում:

ԸՆԴԴԷՄ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐՔ ԵՐԿՈՒ ԱՍԵՆ ԲՆՈՒԹԻՒՆ

Ձեռագիր №	Ձեռագրի էջերը
569	81բ— 95բ
570	108բ—126բ
571	69ա— 84ա
576	240բ—246բ
721	135բ—162բ
2268	111բ—115ա
3483	140բ—166բ

ԸՆԴԴԷՄ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐՔ ԶՄԱՐՄԻՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՊԱԿԱՆԱՑՈՒ ԱՍԵՆ

Ձեռագիր №	Ձեռագրի էջերը
569	95բ—103բ
570	126բ—137ա
571	140բ—148բ
576	246բ—250ա
721	162բ—177ա
2268	115ա—117բ
3483	166բ—181բ

ՊԱՏՄԱՌ ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ՀՈԳԻՈՅՆ...

Ձեռագիր №	Ձեռագրի էջերը
573	80բ— 84ա
2678	169ա[1]—170բ[2]
3192	187ա—1ա2բ

Մեր աշխատության սկզբում նշել ենք արդեն, որ «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն և նրան մաս կազմող առանձին գլուխներ կան Երևանի Մատենադարանի տասներեք ձեռագրերում:

Այստեղ հարմար ենք նկատում ներկայացնել նաև այդ ժողովածու-ձեռագրերի բովանդակությունը:

Ձեռագիր 569
Ժողովածու

1618 թ.: Կամենից, Իլով: Գրիչ, ստացող՝ Տէր Բարթողիմէոս: Թերթ՝ 269: Թուղթ: 15,3×10: Միապսյուն: Նոտրգիր: Տող՝ 20: Կազմ՝ կտդ՝ 1619 թ. մակագրությամբ: Հշտկրն գրչի՝ 1բ, 155բ, 243ա, 269ա, հետագայի՝ 268ա (1690 թ.), 268բ (ԺԷ դ.):

Ձեռագրի էջերը:

50բ—52ա.—Սրբոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, տիեզերալոյս և իմաստուն վարդապետի ասացեալ ի դիմաց հերետիկոսաց (17—19)[6]:

52ա—57բ.—Յաղագս բնութեան, դուն ինչ բնախօսութիւն (19—29):

57բ—60բ.—Եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի թէ ոչ (29—34):

60բ—64ա.—Յորում խնդիր ի մէջ, եթէ երկու բնութիւնքս, զոր ասեն անձնաւորք են և դիմաւորք, եթէ անանձն (35—41):

64ա—74ա.—Ընդդիմաբանութիւն վասն երկու բնութեանցն այլ և այլ, եթէ անհնար է ի միում դիմում լինել: Եւ համաբան ձայնակցութիւն նոցին՝ Նեստորի և այլոց հերձուածողացն (41—58):

74ա—76ա.—Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի և ուղղափառ վարդապետի, Յականաառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւնն Որդւոյն Աստուծոյ ժպրիին հանդգնաբար քակել և յերկուս հատանել և դնել առանձին կամք և կիրք և գործ: Առաջին ձեռնարկս սակաւ ինչ նախադրութիւն բանիս (3—7):

76ա—81բ.—Երկրորդ ձեռնարկս, Յորում զմի բնութիւն բանին յատկաբար յայտնի կացուցանէ: Որ է, առաքելական դաւանութիւն: Զոր պարտի ամենայն զգուշութեամբ պահել անխախտ կաթողիկէ եկեղեցի սուրբ (7—16):

81բ—95բ.—Ընդդէմ այնոցիկ, որք երկու ասեն բնութիւն (չկա)[7]:

95բ—103բ.—Ընդդէմ այնոցիկ, որք զմարմինն Քրիստոսի ապականացու ասեն (չկա):

Ձեռագիր 570
Ժողովածու

1595 թ.: Լէսպոլիս: Գրիչ՝ Արթուն: Ստացող՝ Աստուածատուր քիչ: Թերթ՝ 199: Թուղթ: 13,3×10,4: Միապսյուն: Բոլորգիր: Տող՝ 15: Մանրնկր՝ կխ, լզ: Պահպանակ՝ մագաղաթ 4, լատիներեն: Կազմ՝ կտդ:

[6] Փակագծերում եղած թվարկումները տվյալ գլխի հրատարակության էջերն են:

[7] Փակագծերում գրված «չկա» բառը ցույց է տալիս մեր նորագյուտ հատվածները:

Աստառ՝ սպիտակ մետաքս: Հշտկրն գրչի՝ 193ա, հետագայի՝ 196ա (1689 թ.):

64բ—66բ.—Սրբոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, տիեզերալոյս և իմաստուն վարդապետի, ասացեալ ի դիմաց հերետիկոսաց (17—19):

66բ—74բ.—Յաղագս բնութեան, դուն ինչ բնախօսութիւն (19—29):

74բ—78բ.—Եթէ բնութիւն, անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի, թէ ոչ (29—34):

78բ—83բ.—Յորում խնդիր ի մէջ, եթէ երկու բնութիւնքս, զոր ասեն անձնաւորք են և դիմաւորք, եթէ անանձն (35—41):

84ա—98ա.—Ընդդիմաբանութիւն վասն երկու բնութեանցն այլ և այլ, եթէ անհնար է ի միում լինել: Եւ համաբան ձայնակցութիւն նոցին՝ Նեստորի և այլոց հերձուածողաց (41—58):

98ա—100բ.—Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի և ուղղափառ վարդապետի, Յակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւնն Որդւոյն Աստուծոյ ժպրհին հանդգնաբար քակել և յերկուս հատանել և դնել առանձին կամք և կիրք և գործ: Առաջին ձեռնարկս սակաւ ինչ նախադրութիւն բանիս (3—7):

100բ—108բ.—Երկրորդ ձեռնարկս, Յորում զմի բնութիւն Բանին յատկաբար յայտնի կացուցանէ, որ է առաքելական դաւանութիւն, զոր պարտի ամենայն զգուշութեամբ պահել անխախտ կաթողիկէ Եկեղեցի սուրբ (7—16):

108բ—126բ.—Ընդդէմ այնոցիկ, որք երկու ասեն բնութիւն (չկա):

126բ—137ա.—Ընդդէմ այնոցիկ, որք զմարմինն Քրիստոսի ապականացու ասեն (չկա):

Ձեռագիր 571
Ժողովածու

ԺԷ դ. (1683-ից առաջ): Թերթ՝ 246: Թուղթ: 14×9,5: Միապուն: Բոլորգիր: Տող՝ 17: Կազմ՝ կտոր: Աստառ՝ դեղին կտավ: Հշտկրն հետագայի՝ 243բ (1683 թ.), 244բ (1731 թ.):

61ա—63ա.—Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի և ուղղափառ վարդապետի Հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւն Որդւոյն Աստուծոյ ժպրհին յանդգնաբար քակել և յերկուս հատանել և դնել առանձին կամք և կիրք և գործ: Առաջին ձեռնարկս սակաւ ինչ նախադրութիւն բանիս (3—7):

63ա—69ա.—Երրորդ ձեռնարկս, յորում զմի բնութիւն բանին յատկաբար յայտնի կացուցանէ, որ է առաքելական աւանդութիւն, զոր պարտի ամենայն զգուշութեամբ պահել անխախտ կաթողիկէ սուրբ Եկեղեցի (7—16):

69ա—84ա.—Ընդդէմ այնոցիկ, որք երկու ասեն բնութիւն (չկա):

84ա—85բ.—Սրբոյն Ստեփաննոսի արհիեպիսկոպոսին Սիւնեաց և տիեզերալոյս իմաստուն վարդապետի Պատասխանի ընդդէմ ամենայն հերետիկոսաց (17—19):

85բ—91բ.—Գլուխ երրորդ, Յաղագս բնութեան դուն ինչ բնախօսութիւն (19—29):

91բ—95ա.—Եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի թէ ոչ (29—34).

95ա—99ա.—Յորում խնդիր ի մէջ, եթէ երկու բնութիւնքս, զոր ասեն անձնաւորք են և դիմաւորք, եթէ անանձն (35—41):

99ա—109ա.—Չորրորդ ձեռնարկս, ընդդիմաբանութիւն վասն երկու բնութեանցն այլ և այլ: Եւ թէ անհնար է ի միում դիմում լինել: Եւ համաբան ձայնակցութիւն նոցա Նեստորի և այլոց հերձուածողացն (41—58):

140բ—148բ.—Ընդդէմ այնոցիկ, որք զմարմինն Քրիստոսի ապականացու ասեն (չկա):

Ձեռագիր 573
Ժողովածու

ԺԵ դ. (1421-ից առաջ կամ հետո): Տաթև: Գրիչ՝ Թումա Կաֆայեցի: Թերթ՝ 483: Թուղթ 13,5×11,4: Միապուն: Բոլորգիր: Տող՝ 27: Մանրնկր՝ կխ, լզ: Պահպանակ՝ մագաղաթ 1, բոլորագիծ երկաթագիր: Կազմ՝ կտոր: Աստառ՝ սպիտակ կտավ: Հշտկրն գրչի՝ 162ա:

56ա—56բ.—Տէր Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի և ուղղափառ վարդապետի Հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւն Որդւոյն Աստուծոյ ժպրհին յանդգնաբար քակել և յերկուս հատանել և դնել առանձին կամք և կիրք և գործք: Առաջին ձեռնարկս սակաւ ինչ նախադրութիւն բանիս (3—7):

56բ—58բ.—Երկրորդ ձեռնարկս, Յորում զմի բնութիւն Բանին յատկաբար յայտնի կացուցանէ, որ է առաքելական աւանդութիւն, զոր պարտի ամենայն զգուշութեամբ պահել անխախտ կաթողիկէ սուրբ Եկեղեցոյ (7—16):

58բ—59ա.—Երրորդ ձեռնարկս, բարառնաբար հարցուածք վասն երկու բնութեանցն, եւ առնոյն լուծումն դիմադրաբար չորս գլխով, յորոց գլուխս այս առաջին (17—19):

59ա—60բ.—Գլուխ երկրորդ, Յաղագս բնութեան դուն ինչ բնախօսութիւն (19—29):

60բ—61բ.—Գլուխ չորրորդ. Եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի թէ ոչ (29—34):

61բ—63ա.—Գլուխ հինգերորդ. Ցորում խնդիր ի մէջ, եթէ բնութիւնքս զոր ասեն անձնաւորք և դիմաւորք են, եթէ անանձն (35—41):

63ա—66բ.—Հինգերորդ ձեռնարկս: Ընդդիմաբանութիւն վասն երկու բնութեանցն այլ և այլ, թէ անհնար է ի միում դիմում լինել և համաբան ձայնակցութիւն նոցա Նեստորի և այլոց հերձուածողացն, գլուխ Ե (41—58):

66բ—69բ.—Վեցերորդ ձեռնարկս: Որ ապականեն զաստուածային խորհուրդն ջրով և խմորով, յորում և յայտարարութիւն խորհրդոյ եկեղեցւոյ կարճ և կարճոյ (59—74):

69բ—73բ.—Եւթներորդ ձեռնարկս: Դիմադրութիւն, որք ի խաչին ուրանան զԱստուածութիւնն և մարդ խոստովանին գոլ զչարչարեալն վասն մեր և ոչ Աստուած: Այլայլեն զերեքսրբեան սրբասացութիւն և ոչ տան ասել խաչեցար, և զրպարտեն զմեզ, թէ ի դէմս երրորդումն ասէք խաչեցար, գլուխ Է (75—91):

74ա—77ա.—Ութերորդ ձեռնարկս: Տեսութիւն ի խորհուրդ նաւակատեաց հինգ աւուրն, յորում վասն ճրագալուցին, ի խնդրոյ Բարսեղ վարդապետի, որդւոյ Սմբատայ բարեպաշտի, գլուխ Ը (92—112):

77ա—80բ.—Իններորդ ձեռնարկս: Ցաղագս մեծի Ծննդեան և Ցայտնութեան, որք բանբասեն զմեզ, թէ ի միում աւուր տօնեն և ինքեանք ոչ, այլ ի դեկտեմբերի .ԻԵ. զԾնունդն և յունուարի .Զ. զմկրտութիւն, իսկ զԱետիսն, որ նախքան զայս՝ ի մարտի .ԻԵ., ի խնդրոյ յԱրարատեան նահանգի վերադիտողի (113—131):

80բ—84ա.—Տասներորդ ձեռնարկս: Պատճառ տօնի սրբոյ Հոգւոյն, եթէ ընդէր մի օր տօնեմք և ոչ ութ, ըստ այլ ազգաց Քրիստոնէից, եւ յինչ դէմս հայի միոյ աւուր խորհուրդն, եւ այս ի խնդրոյ տեառն Յովհաննիսի Բջնոյ եպիսկոպոսի (չկա):

84ա—87ա.—Մետասաներորդ ձեռնարկս, ընդդէմ այնոցիկ, որ հակառակ կան և խափանեն զկանոնեալ մատաղսն: Զգաւռն սուրբ զատկին և զտէրունական և զագապս, որ է հոգեհանգիստն, և զամենայն օրհնութիւնս խաչի և եկեղեցւոյ և այլ զենմունք և նուէրք, որ լինին Աստուծոյ (131—148):

Ձեռագիր 576
Ժողովածու

ԺԷ դ. (1687-ից առաջ): Գրիչ՝ Գրիգոր, Պետրոս քհյ-ք: Ստացող՝ Տէր Գրիգոր (գրիչը): Թերթ՝ 280: Թուղթ: 19,5×15,5: Միապսուն: Նոտրգիր: Տող՝ 23: Կազմ՝ կաղ: Հշտկրն նախագաղափար՝ 164բ, գրչի 164բ, 270բ, հետագայի՝ 280բ (1687 թ.):

228բ—229ա.—Սրբոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, ասացեալ տիեզերալոյս և իմաստուն վարդապետի, ի դիմաց հերետիկոսաց (17—19):

229ա—231ա.—Գլուխ երրորդ: Ցաղագս բնութեան դուն ինչ բնախօսութիւն (19—29):

231ա—232բ.—Եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի, թէ ոչ (29—34):

232բ—233բ.—Ցորում խնդիր ի մէջ, եթէ երկու բնութիւնքս զոր ասեն անձնաւորք են և Դիմաւորք, եթէ անանձն (35—41):

234ա—237բ.—Չորրորդ ձեռնարկս: Ընդդիմաբանութիւն վասն երկու բնութեանցն այլ և այլ, եթէ անհնար է ի միում դիմում լինել և համաբան ձայնակցութիւն նոցա Նեստորի և այլոց հերձուածողացն (41—58):

237բ—238բ.—Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի և ուղղափառ վարդապետի հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւն Որդւոյն Աստուծոյ ժպրինն յանդգնաբար բակել և յերկուս հատանել և դնել առանձին կամք և կիրք և գործք (3—7):

238բ—240բ.—Երրորդ ձեռնարկս, որում զմի բնութիւն բանին յատկաբար յայտնի կացուցանէ, որ է առաքելական աւանդութիւն, զոր պարտի ամենայն զգուշութեամբ պահել անխախտ կաթողիկէ եկեղեցի սուրբ (7—16):

240բ—246բ.—Ընդդէմ այնոցիկ, որք երկու ասեն բնութիւնն (չկա):

246բ—250ա.—Ընդդէմ այնոցիկ, որք զմարմին Քրիստոսի ապականացու ասացին (չկա):

Ձեռագիր 721
Ժողովածու

ԺԵ դ. (1484-ից առաջ): Թերթ՝ 227: Թուղթ: 11,5×8: Միապսուն: Բոլորգիր: Տող՝ 13. Մանրկր՝ կիս, լզ: Կազմ՝ կաղ: Հշտկրն հետագայի 2ա, 177բ (1484 թ.):

79ա—81բ.—Սրբոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, տիեզերալոյս և իմաստուն վարդապետի ասացեալ ի դիմաց հերետիկոսաց (17—19):

81բ—91բ.—Գլուխ երկրորդ: Ցաղագս բնութեան դուն ինչ բնախօսութիւն (19—29):

91բ—97ա.—Եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի, թէ ոչ (29—34):

97ա—103բ.—Ցորում խնդիր ի մէջ, եթէ երկու բնութիւնքս, զոր ասեն անձնաւորք են և դիմաւորք, եթէ անանձն (35—41):

103բ—121բ.—Չորրորդ ձեռնարկս, ընդդիմաբանութիւն վասն երկու բնութեանցն այլ և այլ, եթէ անհնար է ի միում դիմում լինել, և համաբան ձայնակցութիւն նոցին Նեստորի և այլոց հերձուածողացն, գլուխ Դ (41—58):

121բ—125ա.—Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի և ուղղափառ վարդապետի հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւն որդւոյն Աստուծոյ ժպրհին յանդգնաբար քակել և յերկուս հատանել և դնել առանձին կամք և կիրք և գործ: Առաջին ձեռնարկս սակաւ ինչ նախադրութիւն բանիս (3—7):

125ա—135ա.—Երկրորդ ձեռնարկս, Ցորում զմի բնութիւն բանին յատկաբար յայտնի կացուցանէ, որ է առաքելական դաւանութիւն, զոր պարտ է ամենայն զգուշութեամբ պահել անխախտ կաթողիկէ Եկեղեցի սուրբ (7—16):

135բ—162բ.—Ընդդէմ այնոցիկ, որ երկու ասեն բնութիւն (չկա):

162բ—177ա.—Ընդդէմ այնոցիկ, որք զմարմինն Քրիստոսի ապականացու ասեն (չկա):

Ձեռագիր 774
Ժողովածու

1651 թ.: Գօթաճիա (Կուտինա): Գրիչ՝ Անտոն Գօթաճեացի, Գրիգոր:

Ստացող՝ Ներսէս Տաթևացի: Թերթ՝ 378: Թուղթ: 15×10,5: Միասյուն: Նոտրգիր: Տող՝ 23—25: Մանրակր՝ կխ, լզ: Պահպանակ՝ մագաղաթ: Կազմ՝ կտդ: Աստառ՝ դրոշմազարդ կտավ: Հշտկրն գրչի՝ 80բ, 99ա, 186բ, 281բ:

73ա—74ա.—Վասն խմորոյ և ջրոյ և յայտարարութիւն սրբոյ Եկեղեցւոյ, ասացեալ սրբոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի (պակասավոր է, 59—67):

Ձեռագիր 841
Ժողովածու

ԺԸ դ.: Թերթ. 283: Թուղթ: 14,5×10: Միասյուն: Բոլորգիր, նոտրգիր: Տող՝ 18: Կազմ՝ կտդ: Աստառ՝ կանաչ մետաքս:

40բ—46բ.—Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, տիեզերալոյս և իմաստուն վարդապետի ասացեալ Հակաճառութիւն ընդդէմ հերետիկոսաց (19—29):

46բ—49բ.—Գլուխ երկրորդ, եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի, թէ ոչ (29—34):

49բ—53ա.—Գլուխ երրորդ. Ցորժամ խնդիր ի մէջ, թէ երկու բնութիւնք, զոր ասեն, անձնաւորք են և դիմաւորք, եթէ անանձն և անդէմ (35—41):

Ձեռագիր 1555
Ժողովածու

1397 թ.: Երուսաղէմ: Թերթ՝ 330: Թուղթ: 13,5×9: Միասյուն: Բոլորգիր: Տող՝ 16: Մանրակր՝ կխ, լզ: Պահպանակ՝ մագաղաթ 3, ուղղագիծ երկաթագիր: Կազմ՝ կտդ: Աստառ՝ կապույտ կտավ: Հշտկրն գրչի՝ 327բ, հետագայի՝ 328ա (ԺԷ դ.):

210բ—215բ.—Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի և ուղղափառ վարդապետի հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւն որդւոյն Աստուծոյ ժպրհին յանդգնաբար քակել և երկուս հատանել և դնել առանձին կամք և կիրք և գործ:

Առաջին ձեռնարկս, յորում զմի բնութիւն բանին յատկաբար յայտնի կացուցանէ, որ է առաքելական դաւանութիւն, զոր պարտի ամենայն զգուշութեամբ պահել անխախտ կաթողիկէ եկեղեցի սուրբ, գլուխ առաջին (7—16):

215բ—216բ.—Երկրորդ ձեռնարկս, բարառնաբար հարցուածք վասն երկու բնութեանցն և առնոյն լուծումն դիմադրաբար չորս գլխով, յորոց գլուխս այս առաջին (17—19):

216բ—222ա.—Գլուխ երկրորդ, Ցաղագս բնութեան դուն ինչ բնախօսութիւն (19—29):

222ա—224բ.—Գլուխ երրորդ. եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի, թէ ոչ (29—34):

225ա—228բ.—Գլուխ չորրորդ. Ցորում խնդիր ի մէջ, եթէ բնութիւնքս, զոր ասեն անձնաւորք և դիմաւորք են, եթէ անանձն (35—41):

228բ—235ա.—Չորրորդ ձեռնարկս, ընդդիմաբանութիւն վասն երկու բնութեանցն այլ և այլ, եթէ անհնար է ի միում դիմում լինել և համաբան ձայնակցութիւն նոցին Նեստորի և այլոց հերձուածողացն, գլուխ Դ (41—58):

236բ—246ա.—Հինգերորդ գլուխ: Դիմադրութիւն այնոցիկ, որք ի խաչին ուրանան զԱստուածութիւնն և մարդ խոստովանին գոլ զչարչարեալն վասն մեր և ոչ Աստուած: Եւ այլայլին զերեքսրբեանն սրբասացութիւն և ոչ տան ասել խաչե-

ցար և կամ անուն ի ներքս ածեն Քրիստոս որ խաչեցար և զրպարտեն զմեզ, թէ ի դէմս երրորդութեանն ասէք խաչեցար (75—91):

246ա—255բ.—Վեցերորդ ձեռնարկս. Ցաղագս մեծի տօնին Ծննդեան և յայտնութեան, որք բամբասեն զմեզ, եթէ ի միում աւուր տօնէն, և ինքեանք առնեն ի դեկտեմբերի քսան և հինգ զԾնունդն, և յունուարի վեց զմկրտութիւնն: Իսկ զԱւետիսն, որ նախ քան զայս ի մարտի քսան և հինգ: Ի խնդրոյ տեառն Յովհաննիսի Արարատեան նահանգի վերադիտողի (113—131):

256ա—265բ.—Եւթներորդ ձեռնարկս, Տեսութիւն ի խորհուրդ նաւակատեաց հինգ աւուրն, յորում և վասն ճրագալուցին: Ի խընդրոյ Բարսեղ վարդապետի՝ որդւոյ Սըմբատայ բարեպաշտի (92—112):

266ա—274բ.—Ութերորդ ձեռնարկս. Ընդդէմ այնոցիկ, որ հակառակ կան և խափանեն զկանոնեալ մատաղսն, զգառն զատկին և զտերունականն և զագաբս, որ է հոգեհանգիստ և որ յօրինութիւն խաչի և Եկեղեցւոյ զենմունք լինի (131—148):

Ձեռագիր 2268
Ժողովածու

1683—1689 թթ.: Ատանա: Գրիչ՝ Կարապետ քհյ, Դաւիթ Եւդոկեցի: Ստացող՝ Դաւիթ Եւդոկեցի (գրիչը): Թերթ՝ 185: Թուղթ: 21,2×15,2: Միասյուն: Նոտրգիր: Տող՝ 22—25: Կազմ՝ կտդ: Աստառ՝ դրոշմազարդ կտաւ: Հշտկրն գրչի՝ 73ա, 170ա, 175ա, 175բ, 183բ, հետագայի 183բ (1810 թ.), 177բ (1811 թ.):

101բ.—Սրբոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, տիեզերալոյս և իմաստուն վարդապետի ասացեալ ի դիմաց հերետիկոսաց և հերձուածողաց (17—19):

101բ—103բ.—Գլուխ երկրորդ. Ցաղագս բնութեան, դուն ինչ բնախօսութեան (19—29):

103բ—104բ.—Եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի, թէ ոչ (29—34):

104բ—105բ.—Յորում խնդիր ի մէջ, եթէ երկու բնութիւն, զոր ասեն անձնաւորք են և դիմաւորք և եթէ անանձն (35—41):

106ա—108բ.—Ընդդիմաբանութիւն վասն երկու բնութեանցն այլ և այլ, եթէ անհնար է ի միում դիմում լինել, և համաբան ձայնակցութիւն նոցին Նեստորի և այլոց հերձուածողացն (41—58):

108բ—109ա.—Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի և ուղղափառ վարդապետի Հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւն որդւոյն Աստուծոյ ժպրհին յանդգնաբար քակել և յերկուս հատանել և դնել առանձին կամք և կիրք և գործ, առաջին ձեռնարկս սակաւ ինչ նախադրութիւն բանիս (3—7):

109ա—111ա.—Յորում զմի բնութիւն բանին յատկաբար յայտնի կացուցանէ, որ է առաքելական աւանդութիւն, զոր պարտ է ամենայն զգուշութեամբ պահել անխախտ կաթողիկէ Եկեղեցի սուրբ (7—16):

111ա—115ա—Ընդդէմ այնոցիկ, որ երկու ասեն բնութիւն (չկա):

115ա—117բ.—Ընդդէմ այնոցիկ, որք զմարմինն Քրիստոսի ապականացու ասեն հերձուածողք (չկա):

Ձեռագիր 2678
Ժողովածու

1426—1476 թթ., գրիչ՝ Մատթէոս: Ստացող՝ Իգնատիոս կր, Եսայի վրդ., ուսիկ աշակերտ, Արիստակէս: Կազմող՝ Պետրոս սրկ.: Թերթ՝ 387: Թուղթ: 26×16,5: Միասյուն: Երկսյուն: Բոլորգիր, նոտրգիր: Տող՝ 50—51: Մնրնկր՝ կխ, լզ: Կազմ՝ կտդ: Աստառ՝ դրոշմազարդ կտավ: Հշտկրն գրչի՝ 21ա, 60բ, 73բ, 122ա, 386ա, կազմողի՝ 387ա (1744 թ.), հետագայի՝ 174բ, 387բ (ԺԷ դ.), 138ա (1722 թ.):

156բ[1]—157ա[1]—Տէր Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի և ուղղափառ վարդապետի Հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւն որդւոյն Աստուծոյ ժպրհին յանդգնաբար քակել և յերկուս հատանել և դնել անդ անձինք կամք և կիրք և գործք: Առաջին ձեռնարկ սակաւ ինչ նախադրութիւն բանիս, գլուխ Ա (3—7):

157ա[1]—158ա[1]—Երկրորդ ձեռնարկս. Յորում զմի բնութիւն բանին յատկաբար և յայտնի կացուցանէ, որ է առաքելական աւանդութիւն, զոր պարտի ամենայն զգուշութեամբ պահել անխափան կաթողիկէ սուրբ Եկեղեցի (7—16):

158ա[1]—158ա[2]—Երրորդ ձեռնարկս. Բարառնաբար հարցուածք վասն երկու բնութեանցն և առնոյն լուծումն դիմադրաբար՝ չորս գլխով, յորոց գլուխս այս առաջին (17—19):

158ա[2]—159ա[1]—Գլուխ երկրորդ. Ցաղագս բնութեան դուն ինչ բնախօսութիւն (19—29):

159ա[1]—159բ[1]—Եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի, թէ ոչ (29—34):

159բ[1]—160ա[2]—Գլուխ չորրորդ.—Յորում խնդիր ի մէջ, եթէ բնութիւնքս, զոր ասեն անձնաւորք և դիմաւորք են, եթէ անանձ (35—41):

160ա[2]—162ա[2]—Չորրորդ ձեռնարկս. Ընդդիմաբանութիւն վասն երկու բնութեանցն այլ

և այլ, եթէ անհնար է ի միում դիմում լինել և համարան ձայնակցութիւն նոցին Նեստորի և այլոց հերձուածողացն (41—58):

162ա²—163բ²—Վեցերորդ ձեռնարկս: Դիմադրութիւն այնոցիկ, որք ի Խաչին ուրանան զԱստուածութիւնն և մարդ խոստովանին գոլ զչարչարեալն վասն մեր և ոչ Աստուած, և այլայլին զերեքսրբեան սրբասացութիւն և ոչ տան ասել խաչեցար: Եւ կամ անուն ի ներքս ածեն Քրիստոս, որ խաչեցար, և զրպարտեն զմեզ, թէ ի դէմս երրորդութեանն ասէք խաչեցար (75—91):

163բ²—165բ²—Եւթներորդ ձեռնարկս. Տեսութիւն ի խորհուրդ նաւակատեաց հինգ աւուրն, յորում և վասն ճրագալուցին, ի խընդրոյ Բարսեղ բարեպաշտի (92—112):

165բ²—167բ¹—Ութերորդ ձեռնարկս. Ցաղագս մեծի տօնին Ծննդեան և Յայտնութեան, որք բամբասեն զմեզ, եթէ ի միում աւուր տօնէն, և ինքեանք առնեն ի դեկտեմբերի քսան և հինգ զԾնունդն և յունուարի վեց զՄկրտութիւն, իսկ զԱւետիսն, որ նախ քան զայս՝ ի մարտի քսան և հինգ: Ի խնդրոյ տեառն Յովհաննիսի Արարատեան նահանգի վերադիտողի (113—131):

167բ¹—169ա¹—Իններորդ ձեռնարկս. Ընդդէմ այնոցիկ, որ հակառակ կան և խափանեն զկանոնեալ մատաղան, զգառն սուրբ զատկին և զտէրունական, և զագապս, որ է հոգեհանգիստն և զամենայն օրհնութիւնս խաչի և եկեղեցւոյ և այլ զենմունք և նուէրք, որ լինին Աստուծոյ (131—148):

169ա¹—170բ²—Տասներորդ ձեռնարկս. Պատճառ տօնի սրբոյ Հոգւոյն, եթէ ընդէր մի օր տօնեմք և ոչ ութ ըստ այլազգ քրիստոնէից և լինչ դէմս հայի միոյ աւուր խորհուրդն: Եւ այս ի խնդրոյ Տեառն Յովհաննիսի Բջնոյ եպիսկոպոսի (չըկա):

Ձեռագիր 3192
Ժողովածու

1714 թ.: Գրիչ՝ ստացող Մկրտիչ: Թերթ՝ 346: Թուղթ՝ 15,1×10,6: Միապսուն նոտրգիր: Տող՝ 20: Մանրակր՝ տերունական 1, կխ, լզ: Կազմ՝ կտոր: Աստառ՝ կարմիր մետաքս: Հշտկրն գրչի՝ 134ա:

139ա—141ա—Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի և ուղղափառ վարդապետի Հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւն որդւոյն Աստուծոյ ժպրհին հանդգնաբար քակել և յերկուս հատանել և դնել անդ անձինք կամք, կիրք և գործք: Առաջին ձեռնարկս սակաւ ինչ նախադրութիւն բանիս, գլուխ Ա, (3—7):

141ա—144բ—Երկրորդ ձեռնարկս. Ցորում զմի բնութիւն բանին յատկաբար յայտնի կացուցանէ, որ է առաքելական աւանդութիւն, զոր պարտի ամենայն զգուշութեամբ պահել անխախտ կաթողիկէ Եկեղեցի սուրբ (7—16):

145ա—145բ.—Երրորդ ձեռնարկս. Բարառնաբար հարցուածք վասն երկու բնութեանցն և առնոյն լուծումն դիմադրաբար, որոց գլուխս առաջին (17—19):

145բ.—149բ.—Գլուխ երկրորդ. Ցաղագս բնութեան դուն ինչ բնախօսութիւն (19—29):

149բ—151բ.—Գլուխ չորրորդ. Եթէ բնութի.նք անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի, թէ ոչ (29—34):

151բ—154ա.—Գլուխ հինգերորդ. Ցորում խնդիր ի մէջ, եթէ երկու բնութիւնքս, զոր ասեն անձնաւորք և դիմաւորք, եթէ անանձն (35—41):

154ա—160բ.—Հինգերորդ ձեռնարկս.—Ընդդիմաբանութիւն վասն երկու բնութեանցն այլ և այլ, եթէ անհնար է ի միում դիմում լինել, և համաբան ձայնակցութիւն նոցա՝ Նեստորի և այլոց հերձուածողացն (41—58):

161ա—166բ.—Վեցերորդ ձեռնարկս. Ընդդէմ այնոցիկ, որք ապականեն զԱստուածային խորհուրդն ջրով և խմորով, յորում և յայտարարութիւն խորհրդոյն Եկեղեցւոյ՝ կարճ ի կարճոյ (59—74):

167ա—173բ.—Եօթներորդ ձեռնարկս. Դիմադրութիւն այնոցիկ, որք ի խաչին ուրանան զԱստուածութիւն և մարդ խոստովանին գոլ զչարչարեալն վասն մեր և ոչ Աստուած: Եւ այլայլին զերեքսրբեանն սրբասացութիւն և ոչ տան ասել խաչեցար և կամ անուն ի ներքս ածեն Քրիստոս որ խաչեցար, և զրպարտեն զմեզ, թէ ի դէմս երրորդութեանն ասէք խաչեցար (75—91):

173բ—180բ.—Ութերորդ ձեռնարկս. Տեսութիւն ի խորհուրդ նաւակատեաց հինգ աւուրն, յորում և վասն ճրագալուցին, ի խընդրոյ Բարսեղ վարդապետի՝ որդւոյ Սըմբատայ բարեպաշտի (92—112):

180բ—186բ.—Իններորդ ձեռնարկս. Ցաղագս մեծ տօնի Ծննդեան և Յայտնութեան, որք բամբասեն զմեզ, եթէ ի միում աւուր տօնէն, և ինքեանք առնեն ի դեկտեմբերի քսան և հինգ զծնունդն և յունուարի վեց զմկրտութիւն, իսկ զԱւետիսն, որ նախ քան զայս՝ ի մարտ քսան և հինգ: Ի խնդրոյ տեառն Յովհաննիսի Արարատեան նահանգի վերադիտողի (113—131):

187ա—192բ.—Տասներորդ ձեռնարկս. Պատճառ տօնի սրբոյ Հոգւոյն, եթէ ընդէր մի օր տօնեմք և ոչ ութ, ըստ այլազգ քրիստոնէից և յինչ դէմս հայի միոյ աւուր խորհուրդն, և այս ի խնդրոյ տեառն Յովհաննիսի Բջնոյ եպիսկոպոսի (չկա):

192բ—197բ.—Մետասաներորդ ձեռնարկս. ընդդէմ այնոցիկ, որք հակառակ կան և խափանեն զկանոնեալ մատաղսն, զգառն սուրբ զատկին և զտէրունական և զագաբս, որ է հոգեհանգիստ և զամենայն օրհնութիւնս խաչի և Եկեղեցւոյ և այլ զենմունք և նուէրք, որ լինի Աստուծոյ (131—148):

Ձեռագիր 3483
Ժողովածու

ԺԴ դ.: Ստացող՝ Պարսամ: Թերթ՝ 199: Թուղթ: 13×9: Միասյուն: Բոլորգիր: Տող՝ 13: Մանրնկր՝ կխ, լզ: Կազմ՝ կտդ: Աստառ՝ կտավ: Հշտկրն ստացողի՝ 197բ, հետագայի՝ 199բ (1439 թ.), 198բ, 199բ (1703 թ.), 3ա (1811 թ.), 2ա (1819 թ.):

84ա—86բ.—Սրբոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, տիեզերալոյս և իմաստուն վարդապետի ասացեալ ի դիմաց հերետիկոսաց (17—19):

86բ—96բ.—Գլուխ երկրորդ. Ցաղագս բնութեան դուն ինչ բնախօսութիւն (19—29):

96բ—102բ.—Եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի թէ ոչ (29—34):

102բ—108բ.—Ցորում խնդիր ի մէջ, եթէ բնութիւնքս զոր ասեն անձնաւորք և դիմաւորք են, եթէ անանձ (35—41):

108բ—126բ.—Չորրորդ ձեռնարկս. Ընդդիմաբանութիւն վասն երկու բնութեանցն այլ և այլ եթէ անհնար է ի միում դիմում լինել, և համաբան ձայնակցութիւն նոցա Նեստորի և այլոց հերձուածողացն (41—58):

126բ—130ա.—Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի և ուղղափառ վարդապետի. Հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւն որդւոյ Աստուծոյ ժպրհին յանդգնաբար քակել և յերկուց յատանել և դնել առանձին կամք և կիրք և գործ: Առաջին ձեռնարկս սակաւ ինչ նախադրութիւն բանիս (3—7):

130ա—140ա.—Ցորում զմի բնութիւն բանին յատկաբար յայտնի կացուցանէ, որ է առաքելական աւանդութիւն, զոր պարտէ ամենայն զգուշութեամբ պահել անխախտ կաթողիկէ Եկեղեցի սուրբ (7—16):

140բ—166բ.—Ընդդէմ այնոցիկ, որք երկու ասեն բնութիւն (չկա):

166բ—181ա.—Ընդդէմ այնոցիկ, որք զմարմին Քրիստոսի ապականացու ասեն (չկա):

Եվ այսպես, երկու հոդվածների մեջ մենք ներկայացրեցինք միջնադարի եկեղեցական մատենագրության փայլուն ներկայացուցիչներից մեկի՝ Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանի կյանքը, եկեղեցական ու քաղաքական գործունեությունը, մատենագրական վաստակը, «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն, նրա նորագյուտ հատվածները և ժողովածուի՝ Երևանի Մատենադարանի ձեռագրերի բովանդակությունը:

Հիրավի մեծ է Օրբելյան սրբազանի վաստակը մեր ազգային մշակույթի ոսկե անդաստանում:

ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ